

10947

10948

10949

10950

10951

8.91.99

74-91

ԱՐՁԱԿ ԿԱՅՆՈՒՆԻ



ՎԵՐՋԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐ ՍԱՍՈՒՆԻ 1894 ԹՈՒԻ ԴԵՊՔԵՐԻՑ

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ

== Ս. ԱՐՈՒԶԵԱՆԻ ==



ՎԻՆՆԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1905.

2013

կպ

891.99-1

ԱՐՇԱԿ ԿԱՅԺՈՒՆԻ

891.99

ՎԵՐՋԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐ ՍԱՍՈՒՆԻ 1894 ԹՈՒԻ ԴԵՊՔԵՐԻՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ԱՐՈՒԶԵԱՆԻ



ՎԻՆՆԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1905.

2647

10112-57

ՎԵՐՋԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

26

ՎԵՐՋԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նուէր՝

«Լեւոններ» ի վշտերգութիւն
Պ. Սմբատ Շահազիզեանին:



ուժ գիշեր էր: Սառը
քամին

Մըռնչում էր կատա-
ղած,

Դըղըրդում էր ամպրո-
պածայն

Սասունն արնով շաղախուած:

Ամայի էր ամենուրեք.

Մարդկային ձայն չէր լսում,

Բուերն էին այս-այն կողմից

Սեւ սուգ ու քօթ գուշակում:

Երկինքը լուռ, մըռայլապատ,

Լուսին, աստղեր խաւարած,

Հուժկու լեքանց կատարները
Սեւ ամպերում՝ ծրարուած:
Ձիւնի մոլոր փաթիլները
Օղակ-օղակ թափուելով,
Ինչպէս ալիք իրար ետեւ
Անցնում էին պարելով:
Անդունդի պէս խոր ձորերում
Քամին ուժգին գողգոռում.
Ասեւ այնտեղ ոգիները
Երգում էին եւ պարում:

Այդ խօլական մթնոլթեան մէջ
Մի ծերունի որդու հետ
Մըտամոլոր թափառում էր՝
Կորցրած ուղիղ արահետ:
Ինչպէս նաւակ յուզուած ծովում՝
Մըրցում էր հետ հողմերի,
Միբեւիքն էր իւր որոնում
Մէջ արիւնտ սարերի:
Ծա ճեղքում էր քուք ու քորան.
Բայց սիրտն ինչպէս վառ հընոց՝
Պապակում էր քիւր կարօտով
Կորած կընոջ ու որդոց:

Եւ մանուկը անմըխիթար
Տանջուած հօրն էր հետեւում.
Ու մերթ քնդ մերթ սառ այտերը
Արտասուքով ոռոգում:

— “Մի լար, որդիս, արտասուքը
Ձէ մեր վիշտը փարատում.
Մի լար, ահա քամին մեր տեղ
Հառաչում է եւ ողբում:”,

Ասաց ծերը, շրփեց ճակտի
Մըրըրկածուփ խորշոմներ,
Շոյեց որդուն, ջերմ համբուրեց,
Անցաւ մտքի սեւ խորքեր:

Ո՛հ, ինչ խաւար, մութ պատկերներ
Աչքի առաջ կանգնեցին.
Եւ ինչ վըշտեր կայծակնալից
Ծորա սըրտում՝ ծրփացին:
Իւր կաթոգին հայրենիքը
Ինչպէս տաճար աւերուած
Ընկած է լուռ, թէպէտ սըրտում
Ծուխը իսպառ չէ մարած:

Նուիրական տուն ու օջախ
Զոհուած անեղ փոթորկի.
Եւ դարեւոր սուրբ օրօրան
Դարձած դագաղ անարգի:
Ինչպէս աշնան թօշնած խաշամ
Գերուած հուժկու հողմերին,
Կուլ զընացած ծեր, պատանի
Դաժան քիւրտի թըրերին:

Եւ անհամար դըմնեայ մըտքեր
Պաշարում են ծերունոյն.
Նա գընում էր՝ յիշում կորած
Իւր պանծալի որերոյն:
Եւ երքեմըն փաղաքշում էր
Կեանքի միակ ճրրագին,
Որ քաջապէս լուռ վազում էր,
Գիրգ մօտեցած իւր կողքին:

Սառ քամու հետ հէգ մանուկը
Մաքառում էր, արտասում.
Եւ ջերմագին արտասուքը
Շիթ-շիթ գետին զըլորում:
Մօրն էր յիշում, քըրոջ, եղբօր.

Դառնակըսկի՞ծ մըրմընջում,
Ժանտ որսորդի ճանկից փախած
Երէի պէս դողդողում:

— “Հայրիկ, ասաց դողդոջ ձայնով.
Ե՞րբ կը տեսնենք մայրիկին,
Ասա, միթէ քիւրդը տարան
Մարօին ու Խաչիկին:,,

Եւ նա իսկոյն իւր աչքերը
Շուրջը դարձրեց վեհերկոտ,
Թըւում էր թէ ձայն էր լըսում
Զէն-զըրահի կըրակոտ:

— “Զէ, որդեակս, վագիր ինձ հետ,
Շուտ քոլորին կը տեսնենք.
Մի արտասուիր, սիրտ առ մինչեւ
Արեւ ու լոյս ողջունենք:,,

Եւ ծերունին նայեց երկնին:
Ու հառաչեց խոր սըրտից,
Երկու կաթիլք աչքից թափեց
Կըրծքին ընկած կապարից:

Լուռ քայլերը նա տանում էր,
 Փըլատակներ անցնելով,
 Ու յիշելով կորած որդոց,
 Սիրտը խարոյկ դարձնելով:
 Օ, նա ըզգում էր, որ հայրենեաց
 Ամեն մի քար արիւնոտ
 Շունչ ալիտ՝ առնէ եւ նոր գարնան
 Դառնայ ծաղիկ ծիծաղկոտ:
 Եւ մըրցելով խօլ քննութեան
 Տարերաց դէմ՝ անդադար,
 Արնով ներկուած ժայռերի մէջ
 Ծա գընում էր յուսալատ:
 Բորանները դեռ գուժալի
 Գոռում էին անդադրում,
 Ձիւնի հուժկու տարափները
 Իրարու հետ մարտընչում:

*

Մի քարձըր լերան մութ խողոզներում
 Ժուխ էր քարձրանում՝ դէպի լուռ ելծեր
 Ծորա մըռայլոտ, անթիւ ծալքերում
 Երբեմն լոյսի առկայծում՝ շողեր:
 Սառցապատ ժայռեր ոտքի տակ տալով,
 Աչեր սեւեռած լերան զազալծին,

Դիմեցին այնտեղ, նոր յոյս վառելով,
 Ժերունի Մըրտճն եւ իւր հէգ որդին:
 Բայց իրքան արնով ներկուած պատկերներ
 Ծոցա աչքերի առաջ քացուեցին,
 Ի՛նչ խուլ հեծեծանք, ի՛նչ խեղդուած ողբեր
 Այրուած, խորովուած սրտերն յուզեցին:
 Ձիւնոտ ժայռերի սառ արանքներում
 Անթիւ հազարով անտէր ընտանիք
 Իրարու գըրկած ողբում, արտասուում
 Աւերակ դարձած թշուառ հայրենիք:
 Որդիք են հեծում տարաքախտ մայրեր,
 Եղբայրներ վայում քոյրեր որքացած,
 Հաց ու ջուր գոչում տըկոր մանուկներ՝
 Մըլծին երկընքի ըստուերում՝ ընկած:
 Շատեր ձիւնի մէջ թափուած կիսաշունչ
 Արնաքամ եղած այրուող վէրքերից.
 Լըռել են նոցա հառաչ ու շըշունջ,
 Էլ կեանք չեն շընչում հարանց լեռներից:
 Եւ ինչպէս կաղնիք քընից տապալուած՝
 Դալուկ փոռած են արի հըսկաներ,
 Թէպէտ ծիւեր են հողի մէջ թաղած,
 Բայց կեանք են կընքում, մարում ճըրագներ:
 Մահուան ըստուերը հիւծուած դէմքերին՝

Դառն կըսկիծը սըրտերում՝ խեղդուած,
 Նորատի հարսներ մէջ խօլ գիշերին
 Ամուսիններ են փրնտուում՝ մոլորուած:
 Եւ սուրբ հայրենեաց լերան ծոցերում՝
 Երկիւղից սըրտի ձայներ կաշկանդել.
 Կարմիր կայլակներ ժահրոտ վէրքերում՝
 Կայծեր են դարձել, հանց հուր քրորնկուել:
 Բուերն են միայն վայում՝ համարձակ,
 Կատաղած քամին փըչում ու գոռում.
 Բուրը թափառում՝ դաշտերին արձակ,
 Կեանք սուլող մի ձայն չէ քննաւ լըսում:
 Եւ այն ճիւնսապատ լերան խորշերից
 Ծուխ էր դէպի մութ երկինք քարձրանում,
 Ծուխն էր Սասունցու անշէջ օջախից
 Թէ լաց, թէ զանգատ Վեհ Տիրոջ յըղում:
 Ոչ մի կանթեղ կար, ոչ այլ լուսարան.
 Տեղ-տեղ միմիայն խարոյկ էր վառուած,
 Ոչ հաց ունէին, ոչ պատըսպարան,
 Գերեզմանական խաւարում՝ ընկած:
 Գըլուխ դընելու քար չըկար ցամաք,
 Վէրքերով պատուած, թափուած ճիւնի մէջ,
 Կըրծքերին խաչեր, սըրտերում՝ համակ
 Հայրենեաց սէրը յաւիտեան անշէջ:

Ժերունի Մըրտօն դողաց սարսափեց,
 Վըշտահար սիրտը դարձրեց մի ծով,
 Զայրոյթն ու ցաւը կըրծքի տակ խեղդեց,
 Խօսեց շատերին նորեկ յոյսերով:
 Մանուկը տըրտում, իսպառ մոլորում՝
 «Մայրիկ,, հառաչեց, կանչեց քոյր, եղբայր.
 Մըրտօն լուռ նորա ձեռիցը քըննած
 Անցաւ, յուզմունքից շառնելով դադար:
 Եւ այդ միջոցին մի պառաւ տանջուած
 Մըրտօին տեսաւ, դէմ առ դէմ կանգնեց,
 Յիշեց իւր որդոց, թոռներին կորցրած,
 Յիշեց իւր տունը, որ թուրքը արեց:
 Յիշեց ու լացեց, սրգաց տըխրագին,
 Ապա լացահար աչեր տըրորեց,
 Դառն հառաչով նայեց Մըրտօին
 Ու մեղամաղձոտ՝ ողբերով ասեց.

— Գնա՛, Մըրտօ, գնա՛ հասիր.
 Զո տուն, քո տեղ թալնեցին,
 Պահող չունին զաւակներդը
 Տիրոջ կամքին մընացին:
 Մարեց արեւ մեր հայրենեաց,
 Սասուն դարձաւ գերեզման,

Այսպէս ցրրիւ ընկանք սար, ձոր.
Չունինք մի տէր, տիրական:
Թըռչունք ունին փափուկ բոյներ.
Իրանց ձագեր ծուարած,
Բայց մենք անբախտ՝ բոյնից զրկուած՝
Եղանք անճար հալածուած:
Գընա Մըրտօ՛, գընա հասի՛ր,
Քո կին, որդիք որոնիր.
Ա՛խ, նոցա հետ գընա մեռիր,
Նոր կեանք, արեւ մի սպասիր:

Եւ փետելով իւր մագերը,
Սիրելիքը կանչելով,
Անցաւ դէպի քարանձաւներ,
Հէգ պառաւր ողբալով:
Չհիօսեց եւ ծերուկ Մըրտօն,
Բեկուած սրբտով հառաչեց,
Լըռիկ անցաւ մի նեղ կաճան,
Քայլերն առաջ ըշտապեց:

Սարի լանջին յանկարծ որդին
Կանգնեց, մի կողմ՝ նայելով,
Մըթութեան մէջ մարդ նշմարեց
Յենուեց հօրը, ասելով.

— „Հայրիկ, հեռու խաւարի մէջ
Նայիր, մարդ է նրկատուով.
Նա գալիս է մեր կաճանով,
Ո՞վ է, ի՞նչ է որոնում?„

Եւ մանուկը կորովազէն՝
Իւր դանակը շօշափեց.
Ու ակնապիշ, սրբտատրրով
Աչքը դէպ այն սեւեռեց:
Նայեց ծերը եւ պողպատէ
Թուրը հանեց պատեանից.
“Քաջ կանց, որդիս, ասաց. իսկոյն
Նա մահ կ'առնէ մեր ձեռից:

Ինչպէս մի սեւ ուրուական
Մահոտ մուլթը ճեղքելով,
Մէկը հապճեպ ընթանում էր,
Հըսկայ քայլեր փոխելով:
Արախչին էր նորա գըլխին,
Վարտիքը լայն ծրփծրփում.
Մէջքին գօտի, կապան կարծիկ,
Զէնքով կուրծքը զարդարուն:
Բեխերը թաւ, միտուքը խիտ,
Աչերն ինչպէս ճրրազներ,

Հայն ճակատից կաթկաթում էր
Ջերմ քրտինքի կաթիլներ:

Մերթ նայում էր նա աջ ու ձախ,
Ուժգին հոգոց արձակում,

Մերթ վրէժի վառուած ծարաւ
Սըրտի մէջը քորքորում:

Չինոտ լերան զանգուածները
Իւր ոտքի տակ ջարդելով,

Մօտենում էր՝ խաւարի մէջ
Տըխուր մի երգ երգելով:

Եւ ներդաշնակ նորա երգին
Քամիքն էին շըշընջում:

Ու ողբ ու կոծ սըրտածըմէիկ
Արնոտ լեռներ դըղըրդում:

Բայց երբ յանկարծ նայեց առաջ,
Ծերին, որդոյն նըկատեց,

Փայլուն թուրը շարժեց ձեռին,
Ահեղ ձայնը թընդացրեց:

— “Ո՛վ ես, աստ, հայ ես թէ քիւրտ,
Խօսիր շուտով, մի շարժուիր.
Թէ գազան ես արնածարաւ,
Հէգ զըլուխըդ ողբացիր:,”

...
ծերը լըսեց ուրախացաւ,
Խըրոխտ ձայնը ճանաչեց.
Եւ քնազդմամբ իսկոյն կըրծքին
Դողրողալով խաչ հանեց:
Դա ծխատէր քահանան էր.
Լեռների մէջ, ձորերում
Ջինտրական ըզգեստի մէջ
Ցրուած հօտն էր որոնում:

— “Ես եմ, տէր-հայր, ու իմ որդին.,,
Ասաց ծերը մօտ գալով,
Ուրախ-ուրախ իւր քայլերը
Շուտ դէպի նա շարժելով:

“Դո՛ւ ես, Մըրտօ, դու եւ որդիդ.,,
Գոչեց ծըպտեալ քահանան.
Ու սիրասիրտ զըրկեց ծերին,
Կըրծքին սեղմեց հէք մանկան:

— “Եթէ առաջ չըխօսէիր,
Քիւրտ պէտք էր քեզ կարծէի,

Եւ երանի այդպէս զինուած
Ես քեզ վաղուց տեսնէի:
Ա'խ, մեր անքախտ ճակատագիր.
Ի՛նչ օրերի յանգեցինք,
Հըրաքորքոք դըժոխքի վիհ
Հոգով, մարմնով թափուեցինք:,,

Ասաց Մըրտօն եւ ծըրարեց
Խօսքը մի դառն հառաչում.
Շարժեց գըլուխը սէգ քահանան,
Խօսեց հանդարտ ու տըրտում.

— Արդարութիւն, օրէնք ու խիղճ
Ժով են նետուել սառուցէ,
Աստուած գիտէ թէ ջերմալից
Ե՞րբ պիտ' արեւ մի ծագէ:
Ո՛ւմ գանգատենք, ո՛րի առաջ
Բանանք սըրտի մեր էջեր,
Երկինքը լուռ, երկիրն անխօս,
Ողջ ըննութիւնն անտաքեր:
Նայիր. ահա հայրենիքի
Բեկորներում՝ մընացինք.

Եւ այդ միայն նորա համար,
Որ սուրբ խաչին յննուեցինք:
Աստուածափառ եկեղեցիք
Շինեցին տաք մոխրակոյտ,
Խաչ ու քուրվառ, մատունք, սկիհ
Խաղ՝ ոտքերի ճեպեռուտ:
Սուրբ տաճարի պաշտօնեային
Յօշոտեցին սըղոցով.
Մանկանցն ինչպէս հեղի հասկեր
Թըրի առին հըրճուելով:
Եւ պըղծեցին սուրբ առաքաստ
Ամօթախած հարսների,
Հարեմ՝ տաքան մատաղ աղջկունք
Նըման քողքոջ վարդերի:
Ամենուրեք գազանների
Գարշակ որջեր փորեցին,
Օճանըման հըրոսակներ
Շէն գիւղօրայք պըղծեցին:
Թոյնով լըցրին դալար արտեր.
Մինչ Սասունը վըշտահար
Երկրասասան իւր ողբերով
Ռժգին ցընցեց համ՝ աշխարհ:
Չը համքերեց սէգ քահանան,

Աչքըն աղի լիճ դարձրած
Աղեգորով սրբոց հառաչ
Յայտեց, տըխուր շըշնչաց.

— “Սասուն, Սասուն, քո որդիքը
Ինչպէս հըգօր առիւծներ
Սուրբ արիւնով ու քրրտինքով
Զարդարեցին քո լանջեր:
Եւ քո լըռիկ ամեն մի քար,
Սէգ կըրծքերին սեղմելով,
Արձան թողին յաւէտ կանգուն,
Մեռան անմահ անունով:
Քո վեր սիրով ոգեւորուած
Տըղայ, աղջիկ միասին
Փըրկչի խաչը վահան առած
Մինչ վերջին շունչ կոռեցին:
Մեռան, դարձան նահատակներ,
Քեզ շինեցին գերեզման.
Բայց կաց, Սասուն, կը գայ մի օր՝
Կը լսուի ձայն յարութեան:,”

Ապա աչքից երկու կաթիլ,
Սառած գետնին թափելով,

Խոր հառաչեց, նայեց աջ-ձախ,
Հանդարտ ձայնով ասելով.

— Ասա՛, այ՛ Մըրտօ, դու ո՛ր ես գընում,
Ի՞նչ ես որոնում մէջ այս լեռների.
Գիտեմ՝ թըշնամուց երբէք չես փախչում,
Տեղեակ եմ ես քո անցած օրերի:
Գիտեմ՝ սիրել ես կեանքիցը ի վեր
Լըծի տակ հեծող քո խեղճ հայրենիք.
Արին ես թափել վէրքից կարեվէր,
Հոգով ու սրբտով պաշտել այս տեղիք:
Եւ այժմ՝ գիտեմ՝ որդիք ես փընտռում
Եւ անմխիթար, թշուառ ամուսին,
Գընա աներեր. նորանց ձեր գիւղում
Երէկ կենդանի յանձնեցի Տէրին:
Ես տեղաւորեցի միակ տաճարում:
Կանգուն տուն չը կայ, քանդուած են բոլոր:
Գընա, ըշտապիր: Ես վեր եմ՝ անցնում,
Ուր անթիւ որբեր թափուած են մոլոր:
Չիւների մէջ են շինել տաղաւար,
Սառցապատ լեռան մըթին ծերպերում.
Ո՛րքան շէն գիւղեր եղան ժանտ աւար,
Ո՛րքան հազարով օջախներ մարում:

Լաւ լըսիր, Մըրտօ՛, տուն չկայ կանգուն.
 Բայց մեր սըրտերը հոյկապ տաճարներ,
 Մեր ճակատներին մեր հարանց անուն,
 Նոցա յիշատակ փառաց արձաններ:
 Խոնարհ մընացինք մենք Փետտի-շահին,
 Մեր քոլոր պարտիք միշտ կատարեցինք,
 Սերտ հաւատարիմ՝ կացինք մենք զահին,
 Առատ հարկեցն էլ յետ չը մնացինք:
 Արին-քըրտիներով հանած պըտուղներ
 Սիրով թափեցինք զահոյքի առաջ,
 Բայց ո՛վ գնահատեց, ո՛վ մեկնեց ձեռներ,
 Ո՛վ լըսեց մեր ձայն, մեր տխուր հառաչ,
 Բաղցած ու ծարաւ զօրքին հաց տուինք,
 Մեզ պատըսպարող ցաւից՝ կարծելով,
 Վառօղ, գընտակի ոսկի հասցըրինք,
 Մեր անկեղծ տէրեր միշտ համարելով:
 Բայց ահա այսպէս՝ մեր քարեաց փոխան
 Կործր ենք դէմ՝ տալիս ժանտ սուխններին,
 Մեր արնով գընած թուրն ու հըրացան
 Նոքա վառեցին մեր սուրբ սարերին:
 Բայց քաւ է այսքան մեր համբերութեան:
 Իշխանը հայր է. չը պիտի խեղդէ:
 Մեր հոգու տէրը Աստուած է միայն,

Մեր սուրբ հաւատին ի՛նչպէս մուր թափէ:
 Կամ՝ ինչո՞ւ համար ապրինք դողալով,
 Մեր աղջիկներին մըթով քօղարկենք,
 Իբր թէ նոցա պատիւ պահելով,
 Թանձրը խաւարին գերի դարձընենք:
 Բաւ է, որքան մենք գոյք աւար տուինք,
 Ո՛րքան սեւ վըշտեր վառեցինք սըրտում.
 Այսօր մեր որդոց արնով ներկեցինք
 Ամէն մի քարը մեր հայրենիքում:
 Ա՛խ, այն քարերն էլ լեզու պիտ' առնեն,
 Որ քողոք յըղեն երկնի արքային.
 Եւ ինչպէս զիշեր այս քոլոր կ'անցնեն,
 Մի նոր լոյս կ'իջնէ արնոտ Սասունին:
 Կանաչ կը պատէ մեր փըլատակներին,
 Սուրբ աճիւններից ընծիւղներ կ'աճեն,
 Նոքոգ ծաղկունքով Սասնոյ սարերին
 Մատաղ սերունդներ դափնիք կը փըռեն:
 Մենք խաչի սիրոյն շատ քերինք զոհեր.
 Բայց կ'ուզէ՞ խաչը, երբ նորան պըղծեն,
 Եւ մենք լուռ ու մունջ ծալենք մեր ձեռներ
 Ու սուրբ մատուռներ մոխրակոյտ դարձնեն:
 Կարծես սուրբ հոգիք հարանց պանծալի
 Շըրջում են մեր մէջ եւ վըրէժ զոչում.

Մեր թափուած մանկանց աչքեր թախծալի
 Միայն փրկութիւն, փրկութիւն հայցում:
 Եւ այլոց վերայ հեռու մեր յոյսեր,
 Մեր բազուկները մեզ պիտ պահպանեն.
 Ու մեր նեցուկը մեր արնոտ սարեր:
 Ա՛խ, մեզ չի կարող ջընջել թըշնամին:
 Մեզ կարմիր զատիկ կը հասնի մի օր,
 Կը պատռի քօղը սառած ծմեռուան.
 Ու մեր վրէժի ձայնը դարեւոր
 Աւետիք կը տայ ուրախ յարութեան:
 Գընա՛, ա՛յ Մըրտօ՛, կ'անցնին այս ցաւեր:
 Սուրբ Վարդան քեզ հետ, զընա դու անվախ,
 Սիրտդ կենդանի պահիր, անվեհեր:
 Գընա՛, Սասունը կեանք կ'առնէ անկախ:,,

Ու խըրախուսեց քահանան ծերին,
 Մանկան ջերմագին զըրկեց, համբուրեց.
 Ապա ոյժ տալով հըսկայ քայլերին,
 Դէպի մութ լեւան խորշերը դիմեց:

*

Ծերուկ Մըրտօն նոր սիրտ առած,
 Ռդումն ուրախ գուրգուրեց.

“Դէ, լսեցիր, ասաց նորան.
 Ինչ քահանան հաղորդեց:,,
 Ու յուսալից առաջ զընաց,
 Մինչ արեւելք կարմրեցաւ,
 Բոսորավառ կամարներով
 Լեւանց կատարք պըճնեցաւ:
 Նայելով դէս աղօթարան
 Եւ փիրուզէ եթերին,
 Հայր եւ որդի ոգեւորուած,
 Խաչ հանեցին կրթօքերին:

Լուռ, ամայի լեռների մէջ՝
 Ինչպէս աւեր տաճարներ,
 Ծուխը երկինք հասցընելով,
 Ընկած են քանդուած գիւղեր:
 Ինչպէս երազ չըբացել էր
 Եռուն կեանքը մարդկային.
 Գերեզմանի խոր լըռութիւն
 Թագաւորում՝ ամենքին:
 Լոկ օդեղէն ովկիանում՝
 Մինչեւ եթեր բարձրացած,
 Սաւառներով յետ ու առաջ,
 Անգղն էր մենակ պար ըրնած:

Գուրս են գալիս աղուէսները,
Ոռնալով տաք որջերից,
Կաքաւները ոստոստելով,
Անցնում՝ բըլուր՝ բըլուրից:
Ու մի աղբիւր վեհ կարկաչով՝
Ջերդ մարգարէ շնորհաւատ՝
Խօլ ձրմեղը նըշաւակում,
Երգում՝ նոր կեանք յուսաւատ:
Բայց չեն լըսում ձայներ մարդու,
Ոչ եզների քառաչներ,
Ոչ կանչերը աքլորների,
Ոչ ոչխարի մայիւններ:

Գոռ քամիքը դադրել էին,
Տեղի տուել ցուրտ հովին.
Բիւր անցեալում սաւառներով,
Լուռ գընում էր ծերունին:
Մարագն այրուած, իսկ ժանգաֆար
Գութանն ընկած ձիւնի տակ,
Երբեմն շէն խորճիթն, ախտո՛ւ
Բոլոր դարձած փըլատակ:
Ըշտեմարանքն անհետացած՝
Մարած բոլոր թոնիրներ,

Սեւցել էին՝ մատուռի պէս
Կեանք շըշնչող օջախներ:
Մանուկն անգամ դալկ արեւին
Եայեց, յիշեց այն օրեր,
Որ գգուել է իւր մօր ծոցում՝
Արշալոյսի մաճանչներ:
Եւ վերջապէս գիւղն երեւաց
Ժէռուտ սարի արանքում,
Ուր մէջ քանդուած խորճիթների
Եկեղեցին էր մընում:
Ոչ գըմբէթ կար, ոչ սըրտաթինդ
Ջանգեր էին ղողանջում,
Անգամ՝ խունկի ծուխը դէպ դուրս
Երկիւղով էր սըլանում:
Եւ երջանիկ առաւօտներ
Մըտաբերեց ծերունին,
Նոր կըրակներ բորբոքելով,
Սըրտում վառուած հընոցին:

Յոգնած, տանջուած ծերն ու որդին
Հասան տաճար հեւալով,
Ջերմ՝ աղօթքով ծունըր դըրին,
Անվերջ շուրջը նայելով:

Քաղցրամըմունջ շարականներ
Հէք ծերունուն յուզեցին,
Եւ ինչ կարօտ, ինչ տենչանքներ
Սըրտի խորքում՝ ծրփացին:
Այնտեղ էին կինն ու որդիք.
Մահուան դալուկ դէմքերին,
Աղօթք էին լուռ մըմընջում,
Ամենքն ընկած ծընկներին:
“Մայրիկ, գոչեց մանուկն ուրախ
Ու դէպի նա սըլացաւ,
Արտասուաթոր, հիւծուած մօրը
Կըրծքին ամուր սեղմեցաւ:

Անթիւ մայրեր արտասուեցին,
Այդ տեսարան տեսնելով,
Կոծ կոծեցին սըրտակըսկիծ,
Կորած որդիք յիշելով:
Ժերը տեսաւ եւ ըսպատեց
Պատարագի վերջերին,
Ուրախութեամբ սիրտը լեցուն՝
“Փանք,, շըշընչաց Արարչին:
Երկու թշուառ մանուկները
Դէպ կարօտ հօր վազեցին,

Հանց որսորդից փախած թռչունը
Բացուած գիրկը նետուեցին:

Բայց մինչ աղօթք, սուրբ շարականը
Հընչում էին քաղցրալի,
Յանկարծ ճըռինչ, խօշ աղաղակ
Ներսում տիրեց սոսկալի:
Տաճկի զօրքը դըրսում կանգնեց
Հըրացաններ ձեռներին,
Դըժոխային ոգով վառուած
Մահ գոռգոռում խեղճերին:
Ժողովուրդը սարսափահար
Դարձաւ մի ծով վրդովուած
Գոցեց դուռը եւ փըրկութեան
Դիմեց խաչին իւր պաշտած:
Եւ անհամար աղօթք ու սուգ
Լեռներ, ձորեր թընդացին,
Սակայն տաճկի գոռ փաշայի
Ժանտ հրճուանքը շարժեցին:
Շողշողացին սուինները,
Հըրացաններ վառուեցին,
Կըրակառ զընտակները
Հեղեղի պէս թափուեցին:

Ուկկիանի մըռընչիւնը
Կը շրջանաւ ձայներից,
Դըղըրդում՝ են սուգ ու ողբեր
Ժովեր դարձած սրբուներից:

Յանկարծ՝ «կըրակ», մըռընչացին
Հագար սրբուեր, հեծելով,
Եւ դըժոխքի քացուին դըռներ,
Հուրը երկինք հասնելով:
Մայր եւ որդի, քոյր եւ եղբայր
Անմեկ սիրով ընդգրկած,
Այրւում էին սուրբ տաճարում
Փըրկէի անուան նուիրում:

Եկեղեցին դարձաւ խարոյկ.
Փայտերի տեղ՝ ողջ ժարդիկ
Այրւում էին, խաչին յենում,
Ողբալով սուգ սրբաճըմիկ:
Բայց լուռ էր, լուռ էր քընութիւն,
Ուրախ հուրն էր ճարճատում,
Հագարաւոր նահատակներ
Անյազ սիրով կըլանում:

Եւ ըզմայլուած դաժան փաշան,
Նայելով այդ դըժոխքին,
Յաղթանակի լուր ուղարկեց
Գող Իլդիզի-քեօշկին:
Ուրախութեան հընչուեց փողը
Մահմետական զօրքերի,
Պար քըռնեցին, ցեխ նետելով,
Վերայ Տիրոջ տաճարի:
Վըրան մըտան խաղաղ սրբաւով
Հայի հացը ուտելով,
Գարշ հայհոյանք ու մահ անարգ
Քրիստոնէին գողալով:

Մըռայլ ծուխը վեր քարձրացաւ,
Ծածկեց երկնի ջինջ կամար,
Եւ ահաբեկ սեւ քստուերը
Վարագուրեց համ-աշխարհ:

Հուրը այրեց-լափեց ամբողջ
Եկեղեցին: Ու անթիւ
Տիրոջ խաչի պաշտողներին
Արաւ մոխիր ու ցորիւ:

Օրը մըլժնեց եւ քարձրացին
Մահաշըշունչ բորաններ,
Եւ խաղալիք իրանց համար
Դարձրին անքիծ նըշխարներ:
Իսկ մոխիրըն առան իսկոյն,
Վէտ-վէտ ողբեր սուլելով,
Անցան երկրի ողջ սահմաններ,
Ամեն մի դուռ քաղխելով:

Գիշերն անցաւ, ծագեց լուսին,
Արծաթ շողերն իւր սփռեց,
Եւ անտարբեր՝ տաճկի վրանն
Ու մոխրակոյտն այն պրճեց:




~~~~~  
===== Գրքն է 30 փուկի =====

Հրատարակչի հասցեն

Москва, Остоженка, домъ Егорова кв. 27, С. Аручянну.

~~~~~


ՀՀ Ազգային գրադարան



NL1711195

ՀՀ Ազգային գրադարան



NL1711196

ՀՀ Ազգային գրադարան



NL1711197

ՀՀ Ազգային գրադարան



NL1711198

ՀՀ Ազգային գրադարան



NL1711199

